Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2018թ. մարտի 28-ի N 118-Ա հրամանի

# Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

# ՄԱՍ I
## ԷԼԵԿՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ԳՆՄԱՆ ԸԹՆԱՑԱԿԱՐԳԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Թույլատրելի դիտարկիչով բացել https://eauction.armeps.am/ էջը
Մուտքագրել ճշգրիտ մուտքանունը "Օգտանուն" դաշտում
Մուտքագրել ճշգրիտ գաղտնաբառը "Գաղտնաբառ" դաշտում
Սեղմել "Մուտք" կոճակը






Բացված պատուհանում երևում են այն դաշտերը, որոնք անհրաժեշտ են աշխատանքի համար՝ ըստ Ձեր արտոնությունների:
Էջի վերևի հատվածում առկայության դեպքում ցուցադրվելու են Ձեր ծանուցումները:




Միջերեսի լեզուն փոխելու համար անհրաժեշտ է սեղմել համապատասխան լեզվի կոճակը:

Այս էջում օգտատերը ստուգում և խմբագրում է Պատվիրատուի տվյալները



«Բանկային ռեկվիզիտներ» դաշտում նոր տող ավելացնելու համար պետք է սեղմել համապատասխան աղյուսակի աջ անկյունի «Ավելացնել» կոճակը: Բացված տողում տեղեկատվությունը մուտքագրելուց հետո անհրաժեշտ է սեղմել տողի աջ անկյունի «Պահել» կոճակը: Առկա տվյալը խմբագրելու համար սեղմեք տողի աջ անկյունի «մատիտ» նշանը: Փոփոխեք տվյալները և սեղմեք «Պահել» կոճակը: Բոլոր տողերում փոփոխություններ կատարելուց հետո Պատվիրատուի տվյալների հաստատման համար էջի ներքևի աջ անկյունում սեղմեք «Պահել» կոճակը:



«Հանձնաժողով» բաժնում  Քարտուղարը ստեղծում է Գնահատող հանձնաժողով կոնկրետ մրցույթի համար և կառավարում արդեն ստեղծված հանձնաժողովները



Հիմնական ցանկում արտացոլվում են առկա հանձնաժողովները:
Առկա հանձնաժողովի տվյալները դիտելու համար անհրաժեշտ է սեղմել «Մանրամասներ» կոճակը:




Նոր հանձնաժողով ստեղծելու համար պետք է սեղմել «Ավելացնել» կոճակը

Բացված էջի ընտրանքի տողերում առաջարկվող ցանկից պետք է ընտրել անհրաժեշտ տվյալը (առկա մրցույթներ, հանձնաժողովի նախագահ,անդամներ)։ Հանձնաժողով ստեղծող Քարտուղարի անունը ավտոմատ նշված է։ Մուտքագրված տվյալները պահպանելու համար պետք է սեղմել «Պահել» կոճակը։



Առկա հանձնաժողովի տվյալներում փոփոխություն կատարելու համար սեղմել «Խմբագրել» կոճակը:

Եթե պետք է ստեղծել նոր հանձնաժողով, որի հիմնական տվյալները քիչ են տարբերվում արդեն առկա հանձնաժողովի տվյալներից, ապա կարելի է սեղմել «Կրկնօրինակել» կոճակը, անել անհրաժեշտ խմբագրումը և սեղմել «Պահել» կոճակը:



«Առկա մրցույթ» բաժնում Քարտուղարը կառավարում է PPCM Համակարգում ստեղծված մրցույթները:




Ընդ որում Աճուրդ համակարգում արտացոլվում են միայն այն CPV կոդերով ստեղծված մրցույթները, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ՝ որպես էլ. Հակադարձ աճուրդով գնման ենթակա առարկաներ: Քարտուղարին հասանելի են միայն այն մրցույթները, որոնք PPCM համակարգում ստեղծվել են տվյալ Պատվիրատուի տվյալ Քարտուղարի (Գնումների համակարգող) համար

Հիմնական ցանկում արտացոլվում են բոլոր առկա մրցույթները և դրանց կարգավիճակը տվյալ պահին

Ծածկագիր | Անվանում | Կարգավիճակ | Ֆիլտր

| Հ/հ | Ծածկագիր | Անվանում | Չափաբաժինների քանակ | Կարգավիճակ | |
|---|---|---|---|---|---|
| 13 | Ծածկագիր-14 | Վերնագիր -14 | 2 | Նոր | > |
| 12 | ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-15/2/5 | ՀՀ գյուղատնտեսության նախարարության ԾԻԳ | 8 | Նոր | > |
| 9 | ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-15/2/5 | ՀՀ արդարադատության նախարարություն | 10 | Հրապարակված | > |
| 8 | ՀՀ ՊՆՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/2 | բաժանորդագրման ծառայությունների մատուցման | 12 | Չկայացած | > |
| 7 | ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-17/1/3 | ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ պահովող ծառայություն | 4 | Չկայացած | > |
| 6 | ՀՀԿՄՆԳԹԻՎ1ՄՆՈՒՀ –ԳՀԱՊՁԲ-18/2 | ՀՈԱԿ-ի համայնքապետարանի կարիքների համար <<սննդամթերքի>> ձեռքերում | 2 | Որակավորում | > |

Ընդհանուր 6 տվյալ

Կոնկրետ մրցույթի տվյալներին ծանոթանալու համար պետք է սեղմել «Մանրամասներ» կոճակը

Մրցույթի մանրամասների էջի վերին հատվածում արտացոլվում է տվյալ պահի դրությամբ վերջինիս համար մուտքագրված ողջ տեղեկատվությունը

Մանրամասների էջի ներքևի հատվածում տվյալ մրցույթի չափաբաժիններն են՝ այդ պահի դրությամբ նրանց համար մուտքագրված տեղեկատվությամբ

**Մրցույթի մանրամասներ** — Արձանագրություն | Չեղարկել | Ցանկ

| | |
|---|---|
| Ծածկագիր | ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18 |
| Անվանում | ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար մսամթերքի ձեռքբերման հրավեր |
| Պատվիրատու | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| Գնման տեսակ | Ապրանք |
| Փոխարժեք | USD 485 RUR 8.4 EUR 600 |

Պատասխաններ և պարզաբանումներ

| Հարցում | Ժամանակ | Պատասխան | Պարզաբանում | Պասիվ | |
|---|---|---|---|---|---|
| Լավ միս չլինի, կլինի? | 2018-02-09 14:15:00 | | Չէ, չի լինի | | > |
| Բա ոնց կլինի | 2018-02-09 14:20:11 | | Լավ կլինի | | > |

| | |
|---|---|
| Հրավեր | Բեռնել |
| Հրապարակման ժամանակ | 2018-02-09 14:11:05 |
| Հայտերի ընդունման վերջնաժամկետ | 2018-02-09 15:23:00 |

Արձանագրություն

| Ժամանակ | Document |
|---|---|

| | |
|---|---|
| Հակադարձ աճուրդ | 2018-02-09 15:43:00 |
| Հարցման արձագանքի վերջնաժամկետ | 2018-02-08 15:23:00 |

Աճուրդի փոփոխված տարբերակ(ներ)

| Ծածկագիր | Հրապարակման ժամանակ |
|---|---|
| ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18 | 2018-02-09 12:33:53 |
| ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18 | 2018-02-09 12:49:37 |

| | |
|---|---|
| Կարգավիճակ | Որակավորում |

| Համար | Cpv | Անվանում | Քանակ | Տեխնիկական առաջարկ |
|---|---|---|---|---|
| 1 | 15111110/2 | 1.տավարի միս, տեղական ոսկրոտ | 50000 կիլոգրամ | Տավարի ոսկրոտ լավ միս |
| 2 | 15113100/2 | 2.խոզի միս, տեղական ոսկրոտ 1-ին կարգի(չալաղաջ, մատ) | 45000 կիլոգրամ | Տեղական ոսկրոտ միս |
| 3 | 15115300/2 | 3.այծի միս | 58000 կիլոգրամ | այծի միս |
| 4 | 15112180/2 | 4.հավի ազդրամիս | 55000 կիլոգրամ | հավի ազդրամիս |

Օգտատերը ցանկացած պահի կարող է կցել ընթացակարգի տվյալ փուլի արձանագրությունը: Դրա համար պետք է մրցույթի մանրամասների էջի «Արձանագրություն» կոճակի միջոցով անցում անել համապատասխան էջ

### Արձանագրություն

| | |
|---|---|
| Ծածկագիր | ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18 |
| Մրցույթ | ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար մսամթերքի ձեռքբերման հրավեր |
| Հրապարակման ժամանակ | |
| Ավարտ | |

| Չափաբաժնի համար | Չափաբաժնի անվանում | Մասնակից | Կարգավիճակ | |
|---|---|---|---|---|
| 1 | 1.տավարի միս, տեղական ոսկրոտ | Կազմակերպություն 4 | Ընտրված անդամ | > |
| 2 | 2.խոզի միս, տեղական ոսկրոտ 1-ին կարգի(չալաղաջ, մատ) | | Չկայացած | |
| 3 | 3.այծի միս | Կազմակերպություն 4 | Ընտրված անդամ | > |
| 4 | 4.հավի ազդրամիս | Կազմակերպություն 4 | Ընտրված անդամ | > |
| 5 | 5.գառի միս | Կազմակերպություն 4 | Ընտրված անդամ | > |
| 6 | 6.ձիու միս | Կ.Կ.Կազմակերպություն | Ընտրված անդամ | > |
| 7 | 7.ճագարի միս | Կազմակերպություն 4 | Ընտրված անդամ | > |
| 8 | 8.տավարի միս, տեղական փափուկ | Մ.Պ.Կազմակերպություն | Ընտրված անդամ | > |
| 9 | 9.խոզի միս, տեղական, փափուկ | Կազմակերպություն 3 | Ընտրված անդամ | > |
| 10 | 10.ընտանի թռչունների միս | Կազմակերպություն 4 | Ընտրված անդամ | > |
| 11 | 11.հորթի միս | Կազմակերպություն 4 | Ընտրված անդամ | > |
| 12 | 12.ավանակի միս | Կազմակերպություն 3 | Ընտրված անդամ | > |
| 13 | 13.ոչխարի միս | Կազմակերպություն 4 | Ընտրված անդամ | > |
| 14 | 14.վայրի թռչնի միս | Կազմակերպություն 4 | Ընտրված անդամ | > |
| 15 | 15.ջրուռ միս | Մ.Պ.Կազմակերպություն | Ընտրված անդամ | > |

Արձանագրություն Choose a file...

Պահել

«Նոր» կարգավիճակով մրցույթի տվյալների մուտքագրման ու դրա կառավարման համար պետք է մանրամասների էջում սեղմել «Կառավարել» կոճակը:

Եթե ընթացիկ բյուջետային տարում տվյալ գնման առարկայի համար առանձնացված չի եղել գումար, ապա օգտատերը կարող է ինքնուրույն սահմանել ամեն չափաբաժնի նախահաշվային գինը:

**Մրցույթի մանրամասներ** — Արձանագրություն | Կառավարել | Չեղարկել | Ցանկ

| | |
|---|---|
| Ծածկագիր | Աշխ-5/2-2017/1 |
| Անվանում | Աշխատանք 5ից ավել 2 լոտ |
| Պատվիրատու | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| Գնման տեսակ | works |
| Փոխարժեք | USD RUR EUR |
| Կարգավիճակ | Նոր |

| Համար | cpv | Անվանում | քանակ | Տեխնիկական առաջարկ |
|---|---|---|---|---|
| 1 | 45000000/5 | 1.շինարարական աշխատանքներ | 1 | |
| 2 | 45000000/6 | 2.շինարարական աշխատանքներ | 1 | |

Չափաբաժնի նախահաշվային գնի սահմանումը

e-AUCTION Առկա Մրցույթ

Վահե Մահտեսյան
ՀՀ ֆինանսների նախարարություն

ARM

231

Համակարգն աշխատում է պիլոտային ռեժիմով: Խնդիրներ հայտնաբերելու դեպքում խնդրում ենք հայտնել infoauction@minfin.am էլ.փոստի հասցեով:

Մանրամասներ

| | |
|---|---|
| Ծածկագիր | ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-36/02/18 |
| Մրցույթ | Էլեկտրոնային աճուրդի փորձնական ՄՀ - 21 12 2017 |

| Համար | Անվանում | Քանակ | Չ/մ | Նախահաշվային գին |
|---|---|---|---|---|
| 1 | արմենիկում | 10 | հատ | 15000000000 դրամ |
| 2 | Նարինջ | 30 | հատ | 1700000000 դրամ |
| 3 | Նարինջ (մեծ) | 50 | հատ | 1900000000 դրամ |

Պահել

Մրցույթի կառավարման էջի համապատասխան դաշտերում անհրաժեշտ է մուտքագրել հրավերի օրինակելի ձևի դինամիկ տեղեկատվությունը *



Կառավարել Մրցույթը | Ցանկ

| | | | |
|---|---|---|---|
| Ծածկագիր | 70/1-2017 | | |
| Մրցույթ | 70 մլն 1 լոտ | | |
| Հանձնաժողովի որոշում | 1 | որոշման ամսաթիվ | |
| Հայտերի ընդունման վերջնաժամկետ | Ավարտ | | |
| Փոխարժեք | Դոլար | Ռուբլի | Եվրո |
| Լիցենզիաներ | Չի պահանջվում | Պահանջվում է | |
| Կանխավճար | Չի պահանջվում | Պահանջվում է | |
| Աշխատանքային ռեսուրսներ | Չի պահանջվում | Պահանջվում է | |
| Տեխնիկական միջոցներ | Չի պահանջվում | Պահանջվում է | |

* Մանրամասների էջերի միջերեսը (ինտերֆեյսը) կարող է տարբերվել՝ կախված գնման առարկայի տիպից (ապրանք, աշխատանք, ծառայություն) և գնումների պլանում սահմանված նախահաշվային գնից:

«Բանկային ռեկվիզիտներ» տողի դաշտերում պետք է ընտրել նշված գործարքների համար Պատվիրատուի բանկային ռեկվիզիտները:
«Տպագիր տարբերակի գումար» տողում նշվում է իրավերի տպագիր օրինակի տրամադրման համար գանձվող գումարը:
«Ապրանքի մատակարարման օր» տողում պետք է մուտքագրել ամսաթիվը, երբ պետք է առաքվի գնման առարկան՝ հաղթող ճանաչված մասնակցի կողմից:
«Ստորագրության օր» տողում անհրաժեշտ է մուտքագրել այն օրերի քանակը, որի ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
«Երաշխիքային օր» դաշտում տողում անհրաժեշտ է մուտքագրել հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետը:
«Նմանատիպ մրցույթներ» դաշտում նկարագրվում են այն աշխատանքները, ապրանքերի, ծառայությունները որոնց պայմանագրերը պետք է ներկայացնի դիմած մասնակիցը՝ բավարարելու համար մրցույթի՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին:



Ապրանքների գնման համար կազմակերպվող մրցույթների դեպքում պատվիրատուի օգտատերը «Տեխնիկական բնութագրեր» դաշտում կարող է ինչպես կոնկրետ չափաբաժնի համապատասխան վանդակում լրացնել տեխնիկական բնութագիրը, այնպես էլ առանձին ֆայլով կցել այն, իսկ մատակարարման դաշտում լրացնել մատակարարման հասցեն, ենթակա քանակները և ժամկետները:

Վճարման ժամանակացույց աղյուսակում լրացվում են նախատեսվող վճարումները՝ ըստ ամիսների




Օգտատերը ցանկացած դաշտում տեղեկատվության մուտքագրումից հետո կարող է սեղմել «Նախադիտել» կոճակը

Համակարգը դիտարկիչի էջում կառաջարկի հրավերի ֆայլային տարբերակը, որտեղ կարմիր գույնով ներկայացված են այն դինամիկ դաշտերը, որոնց համար օգտատերը դեռ տեղեկատվություն չի լրացրել, իսկ դեղին գույնով նրանք, որոնց համար արդեն կա մուտքագրված տվյալ

/ *Հավելված N*

*ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի*

*---------------------------ի N -Ա հրամանի*

*Օրինակելի ձև*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2017-12-18 11:00:00 -ի 1 որոշմամբ

Էլեկտրոնային աճուրդի ծածկագիրը՝ ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-17/1/3

Պատվիրատուն՝ ՀՀ ԳՆ, որը գտնվում է (պատվիրատուի հասցեն) հասցեում, հայտարարում է էլեկտրոնային աճուրդ, որն իրականացվում է eauction.armeps.am համակարգի միջոցով:

Ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայություն մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու հավասար իրավունք:

Ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշներն ու այդ չափանիշների գնահատման համար ներկայացվելիք փաստաթղթերը սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Կատարված փոփոխությունները պահպանելու համար պետք է սեղմել «Պահել» կոճակը:
Դուք կարող եք մինչև մրցույթի հրապարակումը խմբագրել մուտքագրված ցանկացած տեղեկատվություն՝ սեղմելով «Կառավարել» կոճակը




Հայտարարությունը հրապարակելու համար անհրաժեշտ է սեղմել «Հրապարակել» կոճակը:
Մրցույթի կարգավիճակն ինքնաշխատ եղանակով կդառնա «Հրապարակված», ինչից հետո դրանում կարելի է փոփոխություններ անել կամ չեղարկել միայն օրենքով սահմանված կարգով՝ տվյալ հրապարակված մրցույթի մանրամասների էջում սեղմելով համապատասխան կոճակը:

Հրապարակված մրցույթի մանրամասների էջից կարելի է բեռնել հրավերի ֆայլային տարբերակը՝ սեղմելով համապատասխան կոճակը

**Մրցույթի մանրամասներ** Արձանագրություն | Փոփոխել | Չեղարկել | Ցանկ

| | |
|---|---|
| Ծածկագիր | 70/1-2017 |
| Անվանում | 70 մլն 1 լոտ |
| Պատվիրատու | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| Գնման տեսակ | goods |
| Փոխարժեք | USD 480 RUR 9 EUR 570 |
| Պատասխաններ և պարզաբանումներ | Հարցում \| Ժամանակ \| Պատասխան \| Պարզաբանում \| Պասիվ |
| Հրավեր | Բեռնել |
| Հրապարակման ժամանակ | 2017-12-27 18:31:35 |
| Հայտերի ընդունման վերջնաժամկետ | 2018-01-15 09:05:00 |
| Արձանագրություն | |
| Հակադարձ աճուրդ | 2018-01-17 14:00:00 |
| Հարցման արձագանքի վերջնաժամկետ | 2018-01-14 09:05:00 |
| Կարգավիճակ | Հրապարակված |

| Համար | cpv | Անվանում | քանակ | Տեխնիկական առաջարկ | |
|---|---|---|---|---|---|
| 1 | 44831600/1 | ներկի հեռացման լուծույթներ | 2000 | Բարձրորակ լուծույթ | |

Համակարգն ինքնաշխատ հաշվում և այս էջում ցույց է տալիս հակադարձ աճուրդի մեկնարկի, ինչպես նաև՝ հարցումներին արձագանքելու օրն ու ժամը

Հարցմանը պատասխանելու համար պետք է սեղմել տողի աջ անկյունի մանրամասների կոճակը



Պատասխաններ և պարզաբանումներ

| Հարցում | Ժամանակ | Պատասխան | Պարզաբանում | Պասիվ | |
|---|---|---|---|---|---|
| Հարցում | 2017-12-27 19:11:44 | | | | > |

«Հարցման մանրամասներ» էջում կարող եք ընտրել հարցմանն արձագանքելու երեք տարբերակներից մեկը:



Հարցման մանրամասներ

Պասիվացնել Պարզաբանել Պատասխանել Ցանկ

| | |
|---|---|
| Հ/հ | 13 |
| Ծածկագիր | 70/1-2017 |
| Անվանում | 70 մլն 1 լոտ |
| Հարցում | Հարցում |
| Ժամանակ | 2017-12-27 19:11:44 |
| Վերջնաժամկետ | 2018-01-15 14:00:00 |
| Կարգավիճակ | Նոր |

«Պասիվացնել» կոճակի միջոցով կարելի է արձագանքել այն հարցումներին, որոնք չեն առնչվում տվյալ ընթացակարգին: Այդ հարցման պատասխանը հասանելի է լինելու միայն այն ուղարկած մասնակցին



«Պատասխանել» կոճակը թույլ է տալիս արձագանքել այն հարցումներին, որոնց պատասխանը հասանելի է լինելու միայն հարցումն ուղարկած մասնակցին:
Համակարգում ներմուծված են տարածված հարցումների պատասխանների օրինակելի նմուշներ, որոնք կարող եք գտնել «Արագ պատասխաններ» տողում



«Պարզաբանել» կոճակի միջոցով ուղարկվում են պաշտոնական պարզաբանումները, որոնք հասանելի են մրցույթին դիմած բոլոր մասնակիցներին և հրապարակվում են գնումների պաշտոնական տեղեկագրում

Պարզաբանել

Պասիվացնել | Պատասխանել | Ցանկ

| | |
|---|---|
| Հ/հ | 13 |
| Ծածկագիր | 70/1-2017 |
| Անվանում | 70 մլն 1 լոտ |
| Հարցում | Հարցում |
| Ժամանակ | 2017-12-27 19:11:44 |
| Վերջնաժամկետ | 2018-01-15 14:00:00 |
| Կարգավիճակ | Նոր |
| Պարզաբանում | |

Պարզաբանել

Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում Պատվիրատուի օգտատերը կարող է կատարել փոփոխություններ արդեն հրապարակված մրցույթում: Դրա համար պետք է սեղմել հրապարակված մրցույթի մանրամասների էջի «Փոփոխել» կոճակը: Համակարգը կուղղորդի դեպի «Մրցույթի փոփոխություն» էջ, որն ունի նույն ֆունկցիոնալությունը, ինչ մրցույթի կառավարման էջը: Անհրաժեշտ փոփոխությունները կատարելուց հետո պետք է կցել փոփոխման փաստաթուղթը և սեղմել «Հրապարակել փոփոխությունը» կոճակը




Համակարգն ինքնաշխատ եղանակով առկա մրցույթների ցանկում կստեղծի նոր մրցույթ՝ հաշվի առնելով կատարված փոփխությունները

Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հնարավոր է չեղարկել հրապարակված մրցույթը: Դրա համար անհրաժեշտ է հրապարակված մրցույթի մանրամասների էջի վերին աջ անկյունում սեղմել «Չեղարկել» կոճակը: Բացված էջում պետք է կցել անհրաժեշտ փաստաթուղթը և սեղմել «Չեղարկել» կոճակը






Հայտերի ընդունման ժամկետը լրացած մրցույթների կարգավիճակը ինքնաշխատ եղանակով փոխվում է, և մրցույթը ստանում է «Նախաաճուրդային» կարգավիճակ




Առցանց աճուրդի ժամանակացույցին ծանոթանալու համար պետք է սեղմել մրցույթի մանրամասների էջի «Աճուրդ» կոճակը



Սահմանված ժամկետի լրանալաուց հետո ինքնաշխատ եղանակով կբացվի առցանց աճուրդի էջը, որտեղ կարող եք հետևել մրցույթի չափաբաժիններին դիմած մասնակիցների գնառաջարկներին*




* Միաժամանակ կարող է ընթանալ մինչև վեց չափաբաժնի առցանց աճուրդ, որոնց անցկացման ժամկետ է սահմանված 30 րոպեն: Վեցից ավել չափաբաժինների դեպքում հաջորդ վեց չափաբաժինների համար առցանց աճուրդը մեկնարկում է այդ ժամկետի լրանալուց անմիջապես հետո

Մասնակիցները գնառաջարկ ներկայացնելու համար ունեն 5 րոպե ժամանակ: Չափաբաժնի համար ամեն նոր գնառաջարկից հետո այդ չափաբաժնի քայլի ժամանակը թարմացվում է: 5 րոպե անգործությունից հետո, եթե ոչ մի մասնակից գնառաջարկ չի ներկայացրել, ապա այդ չափաբաժնի մասով աճուրդն ավարտվում է



Աճուրդի անցկացման տևողությունը կազմում է 30 րոպե: Եթե բոլոր չափաբաժինների համար աճուրդը ավարտվել է անգործության ժամկետի լրանալուց հետո, միևնույն է չափաբաժինների հաջորդ խմբի աճուրդը կմեկնարկի միայն 30 րոպեի լրանալուց հետո: Եթե չափաբաժինների քանակը չի սպառվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ապա մյուս չափաբաժինների համար աճուրդ կազմակերպվում է հաջորդ աշխատանքային օրը



Առցանց աճուրդի ավարտից հետո տվյալ մրցույթի համար սկսվում է գնահատման գործընթացը, և այն ստանում է «Դիմում-Հայտարարության գնահատում» կարգավիճակը: Այս փուլում հանձնաժողովի անդամները գնահատում են մրցույթին դիմած մասնակիցների Դիմում-Հայտարարությունները և ստուգում դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ քարտուղարը կառավարում է գնահատման փուլն ու ամփոփում այն:




Մրցույթի մանրամասներին ծանոթանալու համար պետք է սեղմել մանրամասների կոճակը

# Մրցույթի մանրամասների էջի վերին հատվածում արտացոլվում է մրցույթի և դրա չափաբաժինների մասին հիմնական տեղեկատվությունը

**Մրցույթի մանրամասներ**

Արձանագրություն | Դիմում-Հայտարարության գնահատման ամփոփում | Չեղարկել | Ցանկ

| | |
|---|---|
| Ծածկագիր | 5/2/2017 |
| Անվանում | մինչև 5 մլն 2 լոտ |
| Պատվիրատու | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| Գնման տեսակ | goods |
| Փոխարժեք | USD 480 RUR 9 EUR 570 |
| Պատասխաններ և պարզաբանումներ | |
| Հրավեր | Բեռնել |
| Հրապարակման ժամանակ | 2017-12-27 18:55:22 |
| Հայտերի ընդունման վերջնաժամկետ | 2018-01-08 09:05:00 |
| Արձանագրություն | |
| Հակադարձ աճուրդ | 2018-01-10 14:00:00 |
| Հարցման արձագանքի վերջնաժամկետ | 2018-01-07 09:05:00 |
| Կարգավիճակ | Դիմում-Հայտարարության գնահատում |

Պատասխաններ և պարզաբանումներ:

| Հարցում | Ժամանակ | Պատասխան | Պարզաբանում | Պասիվ | |
|---|---|---|---|---|---|
| Հարցում | 2017-12-27 21:06:14 | | | | > |

| Համար | cpv | Անվանում | քանակ | Տեխնիկական առաջարկ |
|---|---|---|---|---|
| 1 | 32351150/1 | 1.ալեհավաքներ — արտացոլիչներ | 2500 | ալեհավաքներ |
| 2 | 32351180/1 | 2.ձայնագրությունների կրիչներ | 200 | ձայնագրությունների կրիչներ |

Մրցույթի մանրամասների էջի ստորին հատվածի «Գնառաջարկներ» աղյուսակում արտացոլվում են մրցույթի դիմած մասնակիցների գնառաջարկները՝ ըստ իրենց դիմած չափաբաժինների: Աղյուսակում ցույց են տրվում մասնակիցների՝ ինչպես նախնական, այնպես էլ առցանց աճուրդի ընթացքում տրված վերջնական գները:

| Գնառաջարկներ | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չափաբաժնի համար | | Ընկերություն | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցության իրավունք | ՊԵԿ հարցում |
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | | |
| 1 | 1 | Կ.Կ.Կազմակերպություն | 150000 AMD | 500000 AMD | 5 % | 525000 AMD | 40000 AMD | 5 % | 42000 AMD | x | |
| 2 | 1 | Կ.Կ.Կազմակերպություն | 170000 AMD | 6000000 AMD | 5 % | 6300000 AMD | 6000000 AMD | 5 % | 6300000 AMD | Մերժված | |
| 2 | 2 | Կազմակերպություն 3 | 170000 AMD | 15000 USD | 5 % | 15750 USD | 7275000 AMD | 5 % | 7638750 AMD | Մերժված | |
| 3 | 1 | Կ.Կ.Կազմակերպություն | 190000 AMD | 120000 AMD | 5 % | 126000 AMD | 78036 AMD | 5 % | 81937.8 AMD | x | |
| 3 | 2 | Կազմակերպություն 3 | 190000 AMD | 18000 USD | 2 % | 18360 USD | 8730000 AMD | 2 % | 8904600 AMD | Մերժված | |
| 4 | 1 | Կ.Կ.Կազմակերպություն | 90000 AMD | 5000000 AMD | 5 % | 5250000 AMD | 58922 AMD | 5 % | 61868.1 AMD | x | |

Եթե մասնակիցը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ապա կարելի է մերժել նրան՝ սեղմելով «Մասնակցության իրավունք» սյունակում նրա անվան տողի «x» կոճակը

Բացված էջում քարտուղարը լրացնում է մեկնաբանությունը և սեղմում «Մերժել» կոճակը

| | |
|---|---|
| Հ/հ | 1188 |
| Ծածկագիր | 5/2/2017 |
| Անվանում | մինչև 5 մլն 2 լոտ |
| Կազմակերպություն | մինչև 5 մլն 2 լոտ |
| Մեկնաբանություն | |

Մերժել

Գնահատման կառավարման համար անհրաժեշտ է սեղմել մրցույթի մանրամասների էջի «Դիմում-Հայտարարության գնահատման ամփոփում» կոճակը և բացված էջում սեղմել «Պահել» կոճակը

Դիմում-Հայտարարություն

Աճուրդի մանրամասներ

Դեռ հանձնաժողովի բոլոր անդամները չեն գնահատել

| | |
|---|---|
| Ծածկագիր | 5/2/2017 |
| Մրցույթ | մինչև 5 մլն 2 լոտ |
| Հրապարակման ժամանակ | 2017-12-27 18:55:22 |
| Ավարտ | |
| Բոլոր մասնակիցներ | (see table below) |

| Կազմակերպություն | Չափաբաժիններ | Հավաստում | Քվեարկության արդյունքներ | Հայտի շտկման մեկնաբանություն |
|---|---|---|---|---|
| Ընկե789րություն 1188 ՍՊԸ | 1,2 | Փաստաթուղթ | Անուն / գնահատական / Հանձնաժողով / Մեկնաբանություն<br>Մկրտչյան Կարեն / Բավարար / Նախագահ /<br>Ասատրյան Արթուր / / Անդամ / | |
| Ընկերություն 1190 ՍՊԸ | 1,2 | Փաստաթուղթ | Անուն / գնահատական / Հանձնաժողով / Մեկնաբանություն<br>Մկրտչյան Կարեն / Բավարար / Նախագահ /<br>Ասատրյան Արթուր / / Անդամ / | |

Պահել

* Քարտուղարը չի կարող ամփոփել փուլը, քանի դեռ հանձնաժողովի բոլոր անդամները չեն գնահատել մասնակիցների Դիմում-Հայտարարությունը

Եթե հանձնաժողովի անդամներից մեծամասնությունը մասնակցին տալիս է անբավարար գնահատական*, ապա քարտուղարը պետք է «Պահել» կոճակը սեղմելուց առաջ մեկնաբանություն դաշտում պարտադիր նշում անի: Դրանից հետո համապատասխան մասնակիցը կստանա ծանուցում այն մասին, որ իր Դիմում-Հայտարարության մեջ նկատվել են թերություններ, որոնք անհրաժեշտ է ուղղել:




* Հավասար ձայների դեպքում նախագահի ձայնը որոշիչ է

Մասնակցի կողմից ուղղված տարբերակի ուղարկումից հետո հանձնաժողովի անդամները նորից գնահատում են այն* (գնահատման էջում ցույց է տրվում միայն տվյալ մասնակիցը): Շտկման գնահատումից հետո քարտուղարը կրկին ամփոփում է փուլը




| Հ/հ | Ծածկագիր | Անվանում | Չափաբաժինների քանակ | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|
| 7 | 5/2/2017 | մինչև 5 մլն 2 լոտ | 2 | Դիմում-Հայտարարության շտկման գնահատում |

* Մրցույթն այս փուլում ստանում է «Դիմում-Հայտարարության շտկման գնահատում» կարգավիճակը: Գնահատման կառավարման համար պետք է սեղմել մանրամասների էջի վերին աջ անկյունի «Դիմում - Հայտարարության շտկման ամփոփում» կոճակը



Եթե մասնակիցը կրկին գնահատվել է անբավարար, ապա նրա հայտը մերժվում է և որակավորման փաստաթղթեր ուղարկելու պահանջ են ստանում միայն բավարար գնահատված և գնառաջարկով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները: Դրական գնահատականի դեպքում Դիմում-Հայտարարությունը շտկած մասնակիցը ևս ստանում է որակավորման փաստաթղթեր ուղարկելու ծանուցում, եթե գնառաջարկով համարվում է առաջին տեղ զբաղեցրած:

Դիմում-Հայտարարության շտկում

Մասնակցի մանրամասներ | Աճուրդի մանրամասներ

| | |
|---|---|
| Ծածկագիր | ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-53/01/18 |
| Մրցույթ | Էլեկտրոնային աճուրդի փորձնական ՄՀ - 21 12 2017 |
| Հրապարակման ժամանակ | 2018-01-30 12:55:59 |
| Ավարտ | |

| Կազմակերպություն | Չափաբաժիններ | Նախկին դիմում-հայտարարություն | Քվեարկության արդյունքներ | Հայտի շտկման մեկնաբանություն | Դիմում-հայտարարություն | Քվեարկության արդյունքներ | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| Կ.Կ. Կազմակերպություն | 1,3,4 | Փաստաթուղթ | Անուն / գնահատական / Մեկնաբանություն<br>Կարեն Մկրտչյան / Անբավարար / Կարեն Մկրտչյան<br>Արթուր Ասատրյան / Անբավարար / Արթուր Ասատրյան | Վահե Մախտեսյան | Փաստաթուղթը կցված չէ | Անուն / գնահատական / Հանձնաժողով / Մեկնաբանություն<br>Մկրտչյան Կարեն / / Անդամ /<br>Ասատրյան Արթուր / / Նախագահ / | |

Պահել

«Դիմում-Հայտարարության շտկում» էջի վերին աջ անկյունում գտնվող համապատասխան կոճակի միջոցով կարելի է կատարել անցում տվյալ մասնակցի մանրամասների էջ

### Բիզնեսի մանրամասներ

| | | | |
|---|---|---|---|
| Կազմակերպություն | 12 | $$ | Ընկերություն 1190 ՍՊԸ |
| Տնօրեն | Տնօրեն en | Տնօրեն ru | Աբգար Աբգարյան |
| Բանկ | Բանկ en | Բանկ ru | Կոնվերս Բանկ |
| Հասցե | dfg | grtg | Յայաստան |
| Email | testauction17@gmail.com | | |
| Հեռախոս | 099990990 | | |
| Հ.Վ.Հ.Հ. | 88888888 | | |
| Հաշվեհամար | 787878787878 | | |

Մասնակիցին տրամադրված փաստաթղթերի ուղարկման պահանջ ուղարկելուց հետո մրցույթը ստանում է «Որակավորում» կարգավիճակ




Փաստաթղթերի գնահատման փուլին անցնելու համար պետք է մուտք գործել մրցույթի մանրամասների էջ

Այս փուլում գնահատումը կատարվում է ըստ չափաբաժինների: Կոնկրետ չափաբաժնի համար մասնակցի որակավորման գնահատումը կառավարելու համար պետք է մրցույթի մանրամասների էջի համապատասխան աղյուսակում սեղմել տվյալ չափաբաժնի տողի «Որակավորում» կոճակը: Հանձնաժողովի անդամների կողմից յուրաքանչյուր չափաբաժնի համար ընտրված մասնակցի որակավորման փաստաթղթերի գնահատումից հետո քարտուղարի գրանցահաշվում տվյալ մրցույթի մանրամասների էջում համապատասխան աղյուսակն ունենում է հետևյալ տեսքը

| Համար | cpv | Անվանում | քանակ | Տեխնիկական առաջարկ | |
|---|---|---|---|---|---|
| 1 | 32351150/1 | 1.պլեհավաքներ — արտացոլիչներ | 2500 | պլեհավաքներ | 〉Որակավորման գնահատում |
| 2 | 32351180/1 | 2.ձայնագրությունների կրիչներ | 200 | ձայնագրությունների կրիչներ | 〉Որակավորման գնահատում |

Առանձին չափաբաժնի մասով մասնակցի որակավորման գնահատումը կառավարելու համար պետք է սեղմել տվյալ չափաբաժնի տողի «Որակավորում» կոճակը

Եթե որևէ չափաբաժնի մասով հանձնաժողովի անդամները մասնակցի որակավորման փաստաթղթերում նկատել են թերություններ և անբավարար գնահատել, ապա քարտուղարը «Պահել» կոճակը սեղմում է միայն մեկնաբանության դաշտում գրառում անելուց հետո: Մասնակիցը ինքնաշխատ եղանակով կստանա ծանուցում՝ նշված թերությունները շտկելու և փաստաթղթերը կրկին ուղարկելու պահանջով

Որակավորում

Աճուրդի մանրամասներ

| | |
|---|---|
| Ծածկագիր | ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-08/02/18 |
| Մրցույթ | Էլեկտրոնային աճուրդի փորձնական ՄՀ - 21 12 2017 |
| Հրապարակման ժամանակ | |
| Ավարտ | |
| Չափաբաժնի համար | 2 |
| Չափաբաժնի անվանում | Նարինջ |
| Առաջին տեղ զբաղեցրած | Կազմակերպություն 3 |
| Արժեք | 4000000 AMD |
| Գին | 4000000 AMD |

## Տեխնիկական առաջարկ

| Տեխնիկական բնութագիր | Տեխնիկական առաջարկ | Քվեարկության արդյունքներ |
|---|---|---|
| bav<br>Տեխնիկական բնութագիր | | **Անուն** / **գնահատական** / **Հանձնաժողով** / **Մեկնաբանություն**<br>Կարեն Մկրտչյան / Բավարար / Նախագահ /<br>Արթուր Ասատրյան / Բավարար / Անդամ / lav a |

| Փաստաթուղթ | Քվեարկության արդյունքներ |
|---|---|
| Տեխնիկական միջոցներ | **Անուն** / **գնահատական** / **Հանձնաժողով** / **Մեկնաբանություն**<br>Կարեն Մկրտչյան / Բավարար / Նախագահ /<br>Արթուր Ասատրյան / Բավարար / Անդամ / |
| Ֆինանսական միջոցներ | **Անուն** / **գնահատական** / **Հանձնաժողով** / **Մեկնաբանություն**<br>Կարեն Մկրտչյան / Բավարար / Նախագահ /<br>Արթուր Ասատրյան / Բավարար / Անդամ / lav a |
| Այլ փաստաթղթեր | **Անուն** / **գնահատական** / **Հանձնաժողով** / **Մեկնաբանություն**<br>Կարեն Մկրտչյան / Բավարար / Նախագահ /<br>Արթուր Ասատրյան / Բավարար / Անդամ / |
| Աշխատանքային ռեսուրսներ | **Անուն** / **գնահատական** / **Հանձնաժողով** / **Մեկնաբանություն**<br>Կարեն Մկրտչյան / Բավարար / Նախագահ /<br>Արթուր Ասատրյան / Բավարար / Անդամ / |

Պահել

Սկսած որակավորման փուլից, հանձնաժողովի անդամների կողմից մասնակցի որակավորման փաստաթղթերի գնահատմանը զուգահեռ, քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ ԿԱ ՊԵԿ է ներկայացնում հարցում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ

| Չափաբաժնի համար | Ընկերություն | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցության իրավունք | ՊԵԿ հարցում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | | |
| 1 | Ընկերություն 1190 ՍՊԸ | 4545 AMD | 10 % | 4999.5 AMD | 4545 AMD | 10 % | 4999.5 AMD | x | |
| 1 | Ընկե789րություն 1188 ՍՊԸ | 150000 AMD | 11 % | 166500 AMD | 100000 AMD | 10 % | 110000 AMD | x | |
| 2 | Ընկե789րություն 1188 ՍՊԸ | 14552 AMD | 29 % | 18772.08 AMD | 10000 AMD | 29 % | 12900 AMD | x | |
| 2 | Ընկերություն 1190 ՍՊԸ | 44444 AMD | 10 % | 48888.4 AMD | 41000 AMD | 10 % | 45100 AMD | x | |

Հարցման օրինակելի ձևը բեռնելու համար պետք է սեղմել մասնակցի տողի «ՊԵԿ» սյունակի  կոճակը

Հանձնաժողովի անդամների կողմից շտկված փաստաթղթերի բավարար գնահատման դեպքում մասնակիցը համարվում է ընտրված*, և նրա համար սկսվում է պայմանագրի շնորհման փուլը այն չափաբաժինների համար, որոնց մասով նրա որակավորումը գնահատվել է բավարար**: Քարտուղարն ունի հնարավորություն՝ խմբավորել մասնակցի՝ դրական գնահատված չափաբաժինները՝ դրանց համար առաջարկելով ինչպես միասնական, այնպես էլ՝ մեկից ավելի պայմանագրեր: Շնորհման կառավարման համար պետք է մրցույթի մանրամասների էջի վերին աջ անկյունում սեղմել համապատասխան կոճակը




* Անբավարար գնահատման դեպքում մասնակցի հայտը մերժվում է և որակավորման փուլը սկսվում է այդ չափաբաժնի մասով առցանց աճուրդի արդյունքներով հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի համար

** Մասնակցին կառաջարկվի կնքել պայմանագիր անգործության ժամկետի ավարտից հետո այդ չափաբաժնի մասով, եթե նույնիսկ մրցույթի մյուս չափաբաժինների համար որակավորման փուլը դեռ չի ավարտվել

Եթե կա անհրաժեշտություն ընտրված մասնակից ճանաչված մասնակցի հետ կնքել մեկից ավել պայմանագիր՝ խմբավորելով չափաբաժինները, ապա քարտուղարը «Կառավարել շնորհումը» էջում յուրաքանչյուր չափաբաժնի տողի «խումբ» սյունակում նշում է թե ինչպես պետք է դրանք խմբավորվեն և եթե որևէ չափաբաժնով գոյություն ունի կանխավճար, ապա «Կանխավճար (%)» դաշտում պետք է լրացվի կանխավճարի տոկոսի չափը: Եթե գոյություն ունի այնպիսի չափաբաժին, որին դիմել են մի մասնակցից ավելի,ապա ինքնաշխատ ձևով սահմանվում է անգործության ժամկետ:

Կառավարել շնորհումը — Աճուրդի մանրամասներ

| | |
|---|---|
| Ծածկագիր | ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-56/01/18 |
| Մրցույթ | Էլեկտրոնային աճուրդի փորձնական ՄՀ - 21 12 2017 |
| Հրապարակման ժամանակ | 2018-01-30 14:26:16 |
| Ավարտ | |
| Կազմակերպություն | Կ.Կ.Կազմակերպություն |

| Համար | Cpv | Անվանում | Քանակ | Կանխավճար (%) | Խումբ |
|---|---|---|---|---|---|
| 3 | 33651188/2 | Նարինջ (մեծ) | 50 | 0 | 1 |
| 4 | 33651188/2 | Խնձոր | 550 | 50 | 1 |

Պահել

Նույն խմբում ներառված չափաբաժինների համար ընտրված մասնակցին կառաջարկվի կնքել մեկ միասնական պայմանագիր:

Պայմանագրի շնորհման փուլին անցնելու համար օգտատերը պետք է մուտք գործի մրցույթի մանրամասների էջ, որի «Շնորհում» աղյուսակում չափաբաժիններով խմբավորված պայմանագրերն են: Յուրաքանչյուր պայմանագրի շնորհման էջ մուտք գործելու համար պետք է սեղմել դրա տողի աջ անկյունում գտնվող մանրամասների կոճակը

| Շնորհում | | | |
|---|---|---|---|
| Հ/հ | Չափաբաժիններ | խումբ | |
| 6 | 1 2 | 1 | > |

«Շնորհում» էջի վերին հատվածում մրցույթի մասին հիմնական տեղեկատվությունն է: «Պայմանագիր» տողից կարելի է բեռնել համակարգի կողմից ինքնաշխատ գեներացված պայմանագրի նախագիծը



Էջի ներքևի հատվածի «Հաղորդագրություն» դաշտում պայմանագրի կնքման առաջարկ ստացած մասնակցի օգտատերը կարող է ուղարկել հարցումներ և առաջարկներ պայմանագրի վերաբերյալ, որոնց, նույն դաշտի միջոցով պատասխանում է հանձնաժողովի քարտուղարը: Հաղորդագրության ուղարկման համար պետք է սեղմել «Ուղարկել» կոճակը: Բոլոր հաղորդագրություններն արտացոլվում են «Հաղորդագրություններ» տողում:



Մասնակցի օգտատիրոջ կողմից ստորագրված պայմանագրի կցումից հետո այն հասանելի է դառնում «Շնորհում» էջի համապատասխան տողում: Այն բեռնելուց հետո քարտուղարը օրենքով սահմանված ժամկետում պետք է կցի պայմանագրի՝ Պատվիրատուի կողմից ստորագրված տարբերակը:



Պայմանագրի՝ Պատվիրատուի կողմից ստորագրված տարբերակի կցումից հետո այն հայտնվում է «Վերջնական պայմանագիր» տողում:
Պայմանագրի երկկողմանի ստորագրումից հետո օգտատերերն այլևս չունեն հաղորդագրություններ ուղարկելու հնարավորություն

| | |
|---|---|
| Ստորագրված պայմանագիր | Բեռնել |
